

4

Որոշ երեխաներ չպետք է ընդունեն նյումակոկային զուգորդված պատվաստ կամ պետք է սպասեն

Երեխաներ չպետք է ընդունեն նյումակոկային զուգորդված պատվաստ եթե նրանք ցուցաբերել են սուր (կյանքի սպառնացող) գերզգայնական հակազդեցություն այս պատվաստի նախորդ դեղաչափի նկատմամբ, կամ ունեն սուր գերզգայնություն պատվաստի բաղադրատարրերից մեկի նկատմամբ: Հայտնեք ձեր առողջապահական խնամք ապահովողին եթե ձեր երեխան երբեք ունեցել է սուր հակազդեցություն որեւէ պատվաստի նկատմամբ, կամ ունի որեւէ սուր գերզգայնություն:

Երեխաներ որոնք ունեն թեթեւ հիվանդություն, ինչպես օրինակ մրսաձուլություն, կարող են պատվաստվել: Սակայն այն երեխաները որոնք լուրջ կամ ծանր հիվանդ են, սովորաբար նախքան պատվաստը ընդունելը պետք է սպասեն մինչեւ ապաքինվեն:

5

Որո՞նք են նյումակոկային զուգորդված պատվաստի վտանգները

Ուսումնասիրությունները (շուրջ 60,000 դեղաչափեր) ցույց են տվել, որ նյումակոկային զուգորդված պատվաստի հետ կապված են միայն թեթեւ հակազդեցություններ:

- 4 մանուկներից 1-ը ունեցել է կարմրություն, փափկություն կամ ուռեցք պատվաստի ընդունման վայրում:
- 3 մանուկներից շուրջ 1-ը ունեցել է 100.4°F ջերմություն, եւ 50 մանուկներից շուրջ 1-ը ունեցել է ավելի բարձր ջերմություն (102.2°F-ից բարձր):
- Որոշ երեխաներ դարձել են տրտնջկոտ կամ քնքոտ, կամ այրածակ են կորցրել:

Ցարդ, այս պատվաստի հետ կապված ոչ մեկ լուրջ հակազդեցություն չի հաղորդվել: Այնուամենայնիվ, պատվաստը, ինչպես որեւէ այլ դեղամիջոց, կարող է առ աջացնել լուրջ բարդություններ, ինչպես սուր գերզգայնական հակազդեցություն: Այս պատվաստի լուրջ վնաս, կամ մահ պատճառելու վտանգը չափազանց փոքր է:

6

Ի՞նչ անել եթե մեղմ կամ սուր հակազդեցություն առաջանա

Ինչի՞ն պետք է ուշադրություն դարձնես

Ուշադիր եղեք որեւէ անսովոր իրավիճակի, ինչպես լուրջ գերզգայնական հակազդեցություն, բարձր ջերմություն կամ անսովոր վարվելակերպ:

Լուրջ գերզգայնական հակազդեցությունները շատ հազվադեպ են որեւէ պատվաստի դեպքում: Եթե հակազդեցություն առաջանա, ապա դա կսկսվի պատվաստվելուց հետո մի քանի րոպեից մինչեւ մի քանի ժամվա ընթացքում: Լուրջ գերզգայնական հակազդեցության նշաններ են.

- շնչառական դժվարություն
- տկարություն
- խռպուտություն կամ իզոզոց
- սրտի արագ բաբախում
- կոկորդի ուռածություն
- գլխապտույտ
- դեղնություն
- մաշկաբորբ

Ի՞նչ պետք է անես

- Հեռաձայնեցեք բժիշկին, կամ անմիջապես հիվանդին տարեք բժիշկի մոտ:
- Ասեք ձեր բժիշկին թե ի՞նչ է պատահել, պատահարի օրն ու ժամը, եւ երբ է պատվաստը տրվել:
- Պահանջեցեք ձեր առողջապահական խնամատարից Vaccine Adverse Event Reporting System-ի (VAERS) ձեռնարկ, կամ ինքնորդ հեռաձայնեցեք VAERS 1-800-822-7967 համարով, կամ այցելեցեք նրանց ինտերնետի հետեւյալ հասցեն <http://www.vaers.org>.

7

Պատվաստի Վնասների Հատուցման Պետական Ծրագիր (The National Vaccine Injury Compensation Program)

Հազվադեպ պարագայում երբ դուք կամ ձեր երեխան ցուցաբերեք լուրջ հակազդեցություն պատվաստի նկատմամբ, օգնության կարգով ստեղծված է պետական ծրագիր, խնամքի ծախսերը հոգալու նրանց որոնք վնասված են:

Պատվաստի Վնասների Հատուցման Պետական Ծրագրի մանրամասնությունների վերաբերյալ հեռաձայնեցեք 1-800-338-2382 կամ արձեւեւեք ծրագրի website-ը հետեւյալ հասցեյով <http://www.hrsa.gov/osp/vicp/>

8

Ինչպե՞ս կարող եմ ավելի տեղեկանալ

- Հարցրեք ձեր առողջապահական խնամատարին: Նրանք կարող են ձեզ տալ պատվաստման փաթեթի ներդիր կամ կարող են առաջարկել տեղեկության այլ աղբյուրներ:
- Հեռաձայնեցեք ձեր տեղական կամ նահանգային առողջապահական բաժնի վարակամերժման ծրագրին:
- Կապվեցեք Centers for Disease Control and Prevention (CDC)-ի հետ:
 - Call 1-800-232-4636 (1-800-CDC-INFO)
 - Այցելեցեք National Immunization Program-ի website-ը հետեւյալ հասցեյով <http://www.cdc.gov/nip>



U.S. DEPARTMENT OF HEALTH & HUMAN SERVICES
Centers for Disease Control and Prevention
National Immunization Program

Vaccine Information Statement
Pneumococcal Conjugate Vaccine IMM 577ML - Armenian (9/30/02)
Translated by Transcend Translations, Davis, CA 42 U.S.C. § 300aa-26
<http://www.transcend.net>